ղը խլում էր նրա գդակը, դնում էր իր գլխին, որ ինքն էլ Մարիամ դառնայ եւ նրան էլ սիրեն:

Ես շատ անհանգիստ երեխայ էի, բայց դարձեալ մայրս ինձ չէր ծեծում, որովհետեւ նրա մի հատիկ տղան էի: Մօրս սէրը հասնում էր մինչեւ այն թուլութեանը, որ շատ անգամ ներում էր իմ անկարգութիւններին: Կը պատահէր վաղ առաւօտեան, ամենեւին երեսս չլուացած ու մազերս չսանդրած, տանից դուրս կը գայի, եւ ամբողջ օրը կը խաղայի, կը թափառէի դատարկաշրջիկ երեխաների հետ: Մայրս մասամբ գոհ էր լինում, երբ ես տանը չէի գտնւում, նրա համար որ, եթէ տանը մնայի, անպատճառ կամ մի բան կը կոտրէի, կամ մի բան կը վիթէի, եւ եթէ ոչինչ չլինէր, կը սկսէի քոյրերիս ծեծել: Խե՜ղճ երեխաներ, ինչպէ՜ս համբերում էին չար եղբօր կոպտութիւններին: Կարծես նրանք զգում էին, թէ իրանք աղջիկներ էին, իսկ ես — տղայ, կարծես, մտածում էին, թէ ես շատ բանով բարձր էի նրանցից, ուրեմն, իրաւունք ունէի տանջելու: Եւ այսպէս, մանկութիւնից պատրաստւում էին լինել տղամարդի ստրուկներ... Ո՞վ մտցրեց նրանց մէջ այդ զգացմունքը:

Մեր դրացիները հանգստութիւն չունէին ինձանից: Նրանց մէջ կազմոել էր մի այսպիսի համոզմունք, թէ մայրս ինձ ծնելու միջոցին ոգիները գողացել էին նրա տղան եւ փոխարէնը մի դեւ էին դրել: Բայց իմ եւ դեւի մէջ ոչինչ նմանութիւն չկար. ես բաւական գեղեցիկ երեխայ էի, ի՞նչ անենք, որ չար էի: Բայց դարձեալ մայրս չէր հաւատում այդ զրոյցներին, նա ասում էր, եթէ մի այնպիսի բան լինէր, տատս կը գիտենար: Նա դեւերի հանգամանքները լաւ էր հասկանում:

Իմ հօրս յիշում եմ որպէս մի երազ: Այսքանը միտքս է գալիս, որ նա մի չոր ու ցամաք մարդ էր, մօրս նման բարձր հասակով եւ դէպի ցած կռացած մէջքով: Նրա գլուխը պատած էր տարաժամ ալեւորած, սպիտակ մազերով: Նրան կոչում էին Հայրապետի տղայ Սհակ: Երեսուն եւ վեց տարեկան տղամարդ էր նա, բայց վաղահաս ծերութիւնը բոլորովին փոխել էր նրա երիտասարդական դէմքը: Ինչու՞ այնպէս շուտ ծերացաւ նա, ինչու՞ մօրս նման նա էլ միշտ տխուր էր, եւ երբեք ուրախ լինել կարող չէր:

Մեր տանը խիստ սակաւ էի տեսնում հօրս: Նա, որպէս սովորաբար ասում են, դաշտի մարդ էր: Տարոայ երեք եղանակներում՝ գարուն, ամառ եւ աշուն — նա մշակում էր իր հողերը եւ փոքրիկ այգին, ձմեռը իր ջուլհակի խորի մէջ կտաւ էր գործում: Բայց դարձեալ մնում էր միշտ աղքատ: Հայրս շռայլ մարդ չէր, ոչ արաղ էր խմում, ոչ ծխում էր եւ ոչ էլ լաւ ուտում կամ հագնւում էր: Ես դեռ չեմ մոռացել նրա բազմամեայ հողաթափները, որոնք ստեպ կարկատելուց այնքան ծանրացել էին, որ հազիւ կարելի էր շարժել: Նրա մորթէ